20/1

Հաստատում եմ
«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ» ՍՊԸ տնօրեն
Լ. Մեհրաբյան
« 02 » 02 2021 թ.

ԿԱՐԳ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ –ում բողոքների քննարկման

1. «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ (այսուհետ՝ ՄՈՒՀ) սույն կարգով սահմանում և լուծում է ՄՈՒՀ-ի ուսանողների կողմից բողոքների ներկայացման, դրանց քննարկման և լուծման կարգը:
   1.1.ՄՈՒՀ-ը սույն կարգով սահմանված խնդիրների լուծումն իրականացնում է ՀՀ օրենսդրության, ՄՈՒՀ-ի կանոնադրության հիման վրա:

2. Գնահատականների բողոքարկումը

   2.1.Գնահատականների վերաբերյալ ուսանողների գրավոր և բանավոր քննությունների, ստուգարքների բողոքարկման կարգը սահմանված է «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի քննությունների բողոքարկման կարգում:

3. Ուսանողների այլ բողոքների քննարկումը

   3.1.Ցանկացած այլ հարցով ուսանողների կողմից բողոքներ լինելու դեպքում դրանք քննարկվում են ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի կողմից, ըստ պաշտոնների աստիճանային հերթականության:
   3.2.ՄՈՒՀ-ի ուսանողների գնահատականներին չվերաբերվող այլ բողոքներն առաջին անգամ քննարկվում են առարկայական (ցիկլային) հանձնաժողովներում:
   3.3.Այն դեպքում, երբ ուսանողը չի համաձայնում բերված բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ, իրավունք ունի այն բողոքարկել ուսումնական մաս:
   3.4.Բողոքի արդյունքի վերաբերյալ ուսումնական մասի կողմից կայացված որոշումները բողոքարկման ենթակա են տնօրենին: Տնօրենի կողմից կայացված որոշումները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով:

Ուսումնական մասի վարիչ՝ /Հ.Ա. Բաբայան/